

ՀԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ Ք ՀՈԳՆԱԿԵՐՏԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԱԼ,
 ԻՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Հայերենագիտության մեջ առավել ընդունված տեսակետի համաձայն՝ հին հայերենի ալ, իւ-ը բաղաձայնից առաջ երկրարբառներ են եղել՝ au, iu իսկ ձայնավորից առաջ և բառավերջում՝ ձայնավոր + բաղաձայն կապակցություններ՝ av, iv՝ կամ aw, iw²: Բայց ք հոգնակերտին նախորդող ալ, իւ-ի հնչյունական արժեքի հարցը վիճահարույց է: Հ. Հյուբշմանը, հակառակ տառադարձման իր իսկ ընդունած սկզբունքին (այն է՝ բաղաձայնից առաջ ալ = au, իւ = iu), գտնում է, որ բառավերջյան ալ, իւ կապակցությունների լ(= v)-ը բաղաձայնական արժեքը պահպանում էր հոգնակիի ք վերջավորությունից առաջ: Ուստի նա հին հայերենի հոգնակի գործիականի -ալք և -իւք հնչյունակապակցությունները տառադարձում է [-avk^c] և [-ivk^c] ձևով՝ եզակի գործիականի -ալ [-av]-ին և -իւ [-iv]-ին համապատասխան. օրինակ՝ teleav [տեղեալ] - եզ. գործ., teleavk^c [տեղեալք] - հոգ. գործ. (տեղի □տեղ□ բառից), srtiv [սրտիւ] - եզ. գործ., srtivk^c [սրտիւք] - հոգ. գործ. (սիրտ բառից) և այլն³:

Է. Աղայանը հոգնակիի ք վերջավորությանը նախորդող ալ, իւ-ի հնչյունական արժեքի վերաբերյալ Հ. Հյուբշմանի տեսակետն ընդունում է հոգնակի ուղղականի դեպքում, մինչդեռ հոգնակի գործիականի հարցում Հ. Աճառյանի հետևողությամբ գտնում է, որ քաղաքալք, բանիւք և նման ձևերում ալ-ը և իւ-ը երկրարբառներ են եղել (au, iu): Բ դեպ, հոգնակի ուղղականի հալք, թիւք ու նման ձևերում ալ-ի և իւ-ի՝ ձայնավոր + բաղաձայն կապակցություններ լինելը Է. Աղայանը բացատրում է ք-ից առաջ ենթադրյալ ը-ի առկայությամբ՝ հալքք, թիւքք և այլն⁴:

¹ Skéu H. H. Hbschmann. Kleine Schriften zum Armenischen, Hildesheim – New York, 1976, S. 148–149; Ն ու լ յ ն ի՝ Armenische Grammatik, Erster Teil: Armenische Etymologie, Hildesheim – New York, 1972, S. 2; Է. Աղայան. Գրաբարի քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Երևան, 1964, էջ 116–122:

² Skéu A. Meillet. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique. Vienne, 1936, p. 48–49: Հնմտ. նան՝ Ս. Ավետյան. Վ/Ի/ՈՒ-ի հնչյունական արժեքը և հնչույթային կարգավիճակը դասական հայերենում, Երևան, 2012, էջ 15–16:

³ Skéu H. H. Hbschmann. Kleine Schriften zum Armenischen, S. 240.

⁴ Skéu Է. Աղայան. նշվ. աշխ., էջ 119–122: Նշենք, որ Հ. Աճառյանը ալ, եւ, իւ կապակցությունները բոլոր դիրքերում համարում է երկրարբառներ (տե՛ս Հ. Աճառյան.

Այն, որ *հ. հայ. հոգ. գործ.* -աւք-ի դեպքում աւ-ը երկբարբառ է եղել, անատարկելիորեն հաստատվում է հայերեն որոշ բարբառների տվյալներով: Այսպես, *հ. հայ.* -աւք > -օք գործիականի վերջավորության պահպանման դեպքեր կարող են համարվել Ղարաբաղի բարբառի ձեռք (< ձեռաւք), աչօք (< աչաւք), մըսօկ (< մտօք < մտաւք) ձևերը, որոնք հանդիպում են հատկապես ծերերի խոսքում⁵: Այն հանգամանքը, որ Ղարաբաղի բարբառի -օք վերջավորությամբ ձևերը գործածվում են մանավանդ տարեց մարդկանց կողմից, թերևս, վկայում է, որ դրանք հնուց ժառանգվել են ժողովրդական լեզվի միջոցով, այլ ոչ թե հետագայում փոխառվել գրական ճանապարհով: Բայց առավել կարևոր են Արաբկիրի բարբառի ընձեռած տվյալները: Եթե Ղարաբաղի բարբառում -օք (< -աւք) վերջավորությամբ ձևերը վերապրուկային մնացորդներ են ներկայացնում, ապա Արաբկիրի բարբառում -օք-ը ընդհանրացել է որպես գործիականի հոլովական վերջավորություն և հանդես է գալիս նաև այնպիսի կազմություններում, որոնք ակնհայտորեն չեն կարող դիտվել որպես հին հայերենից փոխառված ձևեր (*հմմտ.* ձեռքօք □ձեռքով□, ըսելօք □ասելով□ և այլն⁶): Նկատենք, օրինակ, ձեռքօք ձևում -օք վերջավորությունը ձեռք բառին ավելացել է *հ. հայ.* ք հոգնակերտի իմաստային մթազնումից հետո, երբ ձեռք ձևը արդեն գիտակցվելիս է եղել որպես եզակի: Նմանապես, հետագա կազմություն է ըսելօք ձևը, քանի որ հին հայերենում, ինչպես հայտնի է, անորոշ դերբայը ենթարկվում է Ո պարզ հոլովման, այնպես որ *ասելաւք ձև չէր կարող գոյություն ունենալ: Հետևաբար, Արաբկիրի բարբառում -օք-ը, դառնալով գործիականի կենսունակ վերջավորություն, տարածվել է իր սկզբնական սահմաններից դուրս՝ հանդես գալով նախկինում տարբեր հոլովումների պատկանող բառերի հետ (ի տարբերություն մյուս բարբառների և գրական աշխարհաբարի, որտեղ ընդհանրացել է գործ.-ով վերջավորությունը):

Նկատենք, որ տիպաբանական տեսանկյունից լեզուներում բառամիջում ձայնավորի ու բաղաձայնի միջև գործում է երկու հակադիր հնչյունական միտում. մի կողմից *բ, ֆ, վ, ք* բաղաձայնները վերածվում են երկբարբառի ոչ վանկարար և ձայնավորի, այսինքն՝ նախկին ձայնավոր + բաղաձայն կապակցություններից առաջանում են երկբարբառներ, մյուս կողմից՝ նախկին երկբարբառներից զարգանում են ձայնավոր + բաղաձայն կապակցություններ՝ երկբարբառի ոչ վանկարար և ձայնավորի բաղաձայնացման (*ս > ք, վ, ֆ* հնչյունական զարգացման) հետևանքով⁷: Արդ, եթե հաշվի առնենք, որ հայերենի նախագրային շրջանում (թերևս, հին

Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 588, ն ու յ ն ի՝ Լիակատար քերականություն հայոց լեզվի, *հ. 6*, Երևան, 1971, էջ 227-229):

⁵ Տե՛ս Կ. Դ ա վ թ յ ա ն. Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 107:

⁶ Տե՛ս Ա. Ղ ա ր ի բ յ ա ն. Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 142:

⁷ Տե՛ս Ա. Ա վ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 83-86:

հայերենում նույնպես) բառամիջում բաղաձայնից առաջ գործել է նախկին ձայնավոր + բաղաձայն կապակցություններից երկրարբառների առաջացման միտումը⁸ (հմմտ. հ.-ե. *dāp-ni- > հ. հայ. տաւն, հ.-ե. *sip-to- > հ. հայ. հիւթ և այլն⁹), և որ հոգ. գործ. -աւք (= auk^c) ձևի ոչ վանկարար ւ (u) ձայնավորը ծագում է հ.-ե. *-bh- բաղաձայնից¹⁰, ապա դրանից հետևում է, որ հ. հայ. հոգ. գործ. -աւք (= auk^c) ձևի աւ (au) երկրարբառն առաջացել է նախկին *-aw- < *-abh- ձայնավոր + բաղաձայն կապակցությունից՝ նշված հնչյունական միտումի համաձայն:

Դրությունն այլ է հ. հայ. հոգ. ուղղ. -աւք (= auk^c) հնչյունակապակցության պարագայում. հայերենի տարածամանակյա տվյալները վկայում են, որ հ. հայ. հոգ. ուղղ. հաւք, կաքաւք և նման ձևերում աւ-ը երկրարբառային արտասանություն չի ունեցել. հմմտ. հ. հայ. հաւ բառի հոգնակի ուղղականի հաւք ձևը, որը օժողովրդական լեզվում պահպանվել է և իմաստափոխվելով՝ դարձել էզակի¹¹: Մակայն դժվար է համաձայնել է. Աղայանի հետ, որ իբր հոգնակի ուղղականի ք-ից առաջ ը ձայնավոր է արտասանվել, ուստի աւ, եւ, իւ-ը ձևեր չեն բերել երկրարբառային արտասանություն, այլ պահպանվել են որպես ձայնավոր + բաղաձայն կապակցություններ: Այդ տեսակետը նախ և առաջ հակասում է հին հայերենի համար է. Աղայանի կողմից նշվող վանկակազմության օրինաչափություններին, որոնց համաձայն՝ օ հին հայերենում վանկը կարող էր փակվել շփական կամ ձայնորդ + որևէ բաղաձայն կապակցությամբ, բայց ոչ երբեք՝ որևէ բաղաձայն + ձայնորդ կապակցությամբ¹²: Հետևաբար, ը ձայնավորով վանկ են կազմել բաղաձայն + ձայնորդը, ինչպես նաև երկու ձայնորդը կամ երկու բաղաձայնը, մինչդեռ շփական կամ ձայնորդ + բաղաձայն կապակցության դեպքում ը չի արտասանվել. հմմտ. մի կողմից՝ բարձ, բը-ժիշկ, մյուս կողմից՝ ձու-կըն, տա-րըր, ա-տա-մըն և այլն¹³: Գալով քերականական ձևերին՝ է. Աղայանը, մի կողմից, գտնում է, որ աստեղք, ճառք, ծովք և նման ձևերում, որտեղ ունենք շփական կամ ձայնորդ + ք կապակցություն, ք-ից առաջ ը չի արտասանվել¹⁴, մյուս կողմից՝ հետագա հնչյունական զարգացումները նկատի ունենալով՝ ենթադրում է, որ, ի տարբերություն հոգնակի գործիականի, հոգնակի ուղղականում -ւք հնչյունակապակցության ք-ից առաջ ը է եղել, օրինակ՝

⁸ Նույն տեղում, էջ 114:

⁹ Այդ բառերի ստուգաբանության համար տե՛ս Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 117, 146:

¹⁰ Տե՛ս А. Meillet. Նշվ. աշխ., էջ 71, Г. Б. Джаукян. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, с. 139.

¹¹ Տե՛ս է. Աղայան. Նշվ. աշխ., էջ 120:

¹² Նույն տեղում, էջ 85:

¹³ Նույն տեղում, էջ 255–256:

¹⁴ Նույն տեղում, էջ 249:

քաղաքաւք - հոգ. գործ., բայց նաւրք, հաւրք - հոգ. ուղղ. և այլն: Միննույն ժամանակ հ. հայ. տղայք > բրբռ. տղէք և նման ձևերում նկատվող այ > է հնչյունական զարգացումից էլնելով՝ նա գտնում է, որ հոգնակի ուղղականում -յք-ի դեպքում ք-ին ը չի նախորդել, հետևաբար այ-ը երկբարբառ է եղել¹⁵:

Եթե նկատի ունենանք, որ դասական հայերենում օտ հնչյունակապակցության դեպքում լ-ի փոխարեն վ-ը կիրառվում է գրության անհրաժեշտությունից էլնելով, որպեսզի օտ հնչյունակապակցությունը գրությամբ չշփոթվի ու(ս) ձայնավորի հետ (ըստ այդմ՝ ո-ին հաջորդող վ-ը հնչյունական արժեքով համապատասխանում է բառավերջի ու միջձայնավորային լ-ին՝ արտահայտելով w կիսաձայնը¹⁶, կամ էլ, ըստ այլ հետազոտողների, շրթնատամնային v կամ երկշրթնային Թ շփականը¹⁷), և որ հին հայերենի վանկակազմության օրինաչափությունների համաձայն՝ ձայնորդ կամ շփական + բաղաձայն կապակցությունը մեկ վանկ է կազմում առանց ը ձայնավորի, այդ պարագայում անբացատրելի է մնում, թե ինչու միննույն w կամ v + ք կապակցությունը մի դեպքում պետք է ենթարկվեր վանկակազմության ընդհանուր օրենքին և մեկ վանկ կազմեր առանց ը ձայնավորի (հմմտ. ծովք), իսկ մեկ այլ դեպքում պետք է ք-ին նախորդող ը ունենար (հաւրք, հովիւրք և այլն):

Հարկ է նշել նաև, որ հին հայերենում աւ, իւ և այ կապակցությունների գործառության շրջանակները համընկնում են. աւ, իւ, այ-ը բաղաձայնից առաջ երկբարբառներ են ներկայացնում, ըստ այդմ՝ լ-ն և յ-ն հանդես են գալիս որպես երկբարբառի ոչ վանկարար տարր, իսկ ձայնավորից առաջ և բառավերջում աւ, իւ, այ-ը ձայնավոր + բաղաձայն կապակցություններ են. հմմտ. մի կողմից՝ հայր, փայտ, աւղ, տան, սին և այլն, որտեղ ունենք ai, au, iu երկբարբառներ, մյուս կողմից՝ տղայ, կաքաւ, ազնիւ, որոնցում առկա են ay, aw, iw (ըստ Է. Ադայանի՝ aԹ, iԹ կամ av, iv) ձայնավոր + բաղաձայն կապակցություններ¹⁸: Այդ պարագայում անհասկանալի է, թե ինչու յ ձայնորդը հոգնակի ուղղականում, իսկ լ ձայնորդը հոգնակի գործիականում կարող էին ք հոգնակերտի հետ մեկ վանկ կազմել առանց ը ձայնավորի, և, ըստ այդմ, լ և յ ձայնորդ բաղաձայնները՝ վերածվել երկբարբառի ոչ վանկարար տարրի (հմմտ. տղայք և քաղաքաւք), մինչդեռ հոգնակի ուղղականում միննույն լ ձայնորդը, շեղվելով ընդհանուր կանոնից, հաջորդող ք հոգնակերտի հետ վանկ պիտի կազմեր ը ձայնավորի միջոցով, իսկ այդ պարագայում, բնականաբար, չէին կարող համապատասխան երկբարբառներ առաջանալ: Անշուշտ, ճիշտ չէր լինի մտածել, թե *հաւրք, *հովիւրք և նման ձևերում ենթադրյալ ը-ն ձևա-

¹⁵ Նույն տեղում, էջ 250–251:

¹⁶ Sté u A. Meillet. Նշվ. աշխ., էջ 48–49, հմմտ. նաև՝ Ս. Ավետյան. նշվ. աշխ., էջ 15–16:

¹⁷ Sté u Է. Ադայան. նշվ. աշխ., էջ 118–122, 234–235 և էջ 232՝ տողատակ, հմմտ. նաև՝ Ս. Ավետյան. նշվ. աշխ., էջ 20–23, 25–26:

¹⁸ Sté u Է. Ադայան. նշվ. աշխ., էջ 113–115, 119–122:

բանական պայմանավորվածություն է ունեցել, այսինքն՝ հոգնակի ուղղականը բնութագրվել է ք հոգնակերտին նախորդող ը ձայնավորի առկայությամբ: Եթե այդպես լիներ, նույն ը-ն պետք է հանդես գար նաև տղայք տիպի հոգնակի ուղղականի ձևում, իսկ այդ դեպքում*տղայքը ձևի այ-ը այլևս երկբարբառ չէր լինի և հետագայում բարբառներում չէր կարող այ > է պարզեցման ենթարկվել: Եվ վերջապես, եթե նկատի ունենանք, որ *h. hայ. հալ բառի հոգնակի ուղղականի* փալք ձևը ժողովրդական լեզվում պահպանվել է և իմաստափոխվելով՝ դարձել էգակի¹⁹, և այդ պարագայում բարբառային հալք, հաֆք, խավք, խավֆք օթոչուն, հավ²⁰ ձևերից ոչ մեկում ք-ից առաջ ը հանդես չի գալիս, ապա այդ փաստը նույնպես հաստատում է, որ *h. hայ. հալք և, ըստ այդմ, առհասարակ հոգնակի ուղղականի* -ալք, -ելք, -իլք հնչյունակապակցությունների ք-ին նախորդող ը չի եղել:

Հոգնակի ուղղականի ք-ից առաջ ալ, ել, իլ-ի պահպանվելը որպես ձայնավոր + բաղաձայն կապակցություններ, կարծում ենք, պայմանավորված է եղել էգակի ուղղականի բառավերջյան ալ, ել, իլ ձայնավոր + բաղաձայն կապակցությունների համաբանական ազդեցությամբ: Մինչդեռ հոգնակի գործիականի -ալք հնչյունակապակցության դեպքում երկբարբառի առաջացմանը, թերևս, նպաստել է հետևյալ հանգամանքը. ի տարբերություն հոգ. ուղղ. -ալք, -ելք, -իլք ձևերի, որոնք սովորաբար գուգահեռաբար ունեն եգ. ուղղ. -ալ, -ել, -իլ ձևեր (և հենց դա էլ հիմք է ծառայել նշված համաբանական հնչյունական զարգացման համար), հոգ. գործ. -ալք ձևը միշտ չէ, որ համապատասխան էգակի թվի -ալ ձև ունի. մասնավորապես, եգ. գործ. -ալ ձևը բացակայում է հին հայերենի Ա և Բ-Ա հոլովումներին պատկանող անեգական բառերի, ինչպես նաև տարահիմք հոլովում ունեցող մի շարք բառերի դեպքում. *հմմտ.* կամք – կամալք, խելք – խելալք, փառք – փառալք, ձեռք – ձեռալք (եգ. ձեռամբ), աչք – աչալք (եգ. ալկամբ) և այլն, որոնցից սկիզբ առնելով ու ընդհանրանալով՝ ալ (= au) երկբարբառային արտասանությունը այնուհետև կարող էր տարածվել նաև գուգահեռաբար եգ. գործ. -ալ ունեցող հոգ. գործ. -ալք ձևի վրա (օր.՝ քաղաքալ [k^caʎak^caw] – եգ. գործ., քաղաքալք [k^caʎak^cauk^c] – հոգ. գործ. և այլն):

Ինչ վերաբերում է -իլք տիպի հոգնակի գործիականի ձևին (բանիլք, սրտիլք և այլն), կարծում ենք՝ հնարավոր չէ ստուգապես ասել՝ արդյոք վերջինս ենթարկվել է էգակի գործիականի (բանիլ, սրտիլ) համաբանական ազդեցությանը և, ըստ այդմ, արտասանվել՝ -iwxh (*baniwxh, srtiwxh* և այլն), իսկ այնուհետև՝ -ivkh՝ w > v հնչյունական զարգացմամբ (*bani^ovxh, srti^ovkh* և այլն), թե՛ բաղաձայնից առաջ ընդհանուր օրինաչափության համաձայն ունեցել է երկբարբառային արտասանություն՝ -iukh (*baniukh, srtiukh* և այլն): Բանն այն է, որ, ի տարբերություն *h. hայ. հոգ.*

¹⁹ Նույն տեղում, էջ 120:

²⁰ Տե՛ս Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 66:

գործ. -աւք ձնի, որը, ինչպէս տեսանք, Արաբկիրի բարբառում պահպանվել է որպէս գործիական հոլովի ընդհանրական վերջավորություն, իսկ Ղարաբաղի բարբառում՝ մնացորդային տեսքով, *հ. հայ.* -իւք տիպի գործիականի ձևեր ժողովրդական լեզվում (բարբառներից *ո՛չ մեկում*) չեն պահպանվել: Ուստի շատ հնարավոր է, որ բանիւք, սրտիւք և նման ձևերի համար ենթադրվող *baniukh, srtiukh* արտասանությունը իրականում ոչ թե հինհայերենյան է, այլ ավանդական, որը ձևավորվել է հետագայում հին հայերեն տեքստերի ընթերցման ժամանակ՝ ձիւն, սիւք և այլ բառերի իւ երկբարբառի արտասանության նմանակմամբ: Մյուս կողմից, այն հանգամանքը, որ *հոգ. գործ. -աւք-ը*, ի տարբերություն *հոգ. ուղղ. -աւք-ի*, երկբարբառային արտասանություն է ունեցել և չի ենթարկվել եզակի գործիականի համաբանական ազդեցությանը, չի կարող հիմք ծառայել ենթադրելու, որ նույն բանը պիտի տեղի ունենար նաև *հոգ. գործ. -իւք-ի* պարագայում: Պետք է նկատի ունենալ, որ թեև համաբանությունը չափազանց կարևոր դեր է խաղում լեզվի պատմական զարգացման մեջ քերականական ձևերի ընդհանրացման ու միօրինակացման հարցում²¹, այդուհանդերձ քերականական ձևերի համաբանական փոփոխությունները (և առհասարակ ձևաբանական փոփոխությունները), ի տարբերություն հնչյունական օրինաչափ փոփոխությունների (հնչյունական օրենքների), տեղի չեն ունենում ինքնաբերաբար, այլ պայմանավորված են քերականական ձևերի գործառությանը, ուստի միշտ չէ, որ ընդգրկում են համանման բոլոր դեպքերը²²: Այլ կերպ ասած՝ համաբանության ընձեռած հնարավորությունից լեզուն մի դեպքում կարող է օգտվել, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ: Բացի այդ, տվյալ համաբանական փոփոխությունը կարող է կա՛մ դառնալ ընդհանուր օրինաչափություն, կա՛մ էլ զանազան գործոններով պայմանավորված՝ չընդհանրանալ: Այսպէս, հայերենի պատմական զարգացման ընթացքում *հ. հայ.* Ե խոնարհման ան ածանցավոր բայերը, որոնք հին հայերենում անցյալ կատարյալում (և նրա հիմքից կազմվող ժամանակաձևերում) խոնարհվում էին ներգործաձև վերջավորություններով (*հմմտ. հասանեմ - հասի օհասսաօ, եհաս օհասսավօ, գտանեմ - գտի օգտաօ, եգիտ օգտավօ* և այլն) ընդհանրական համաբանական փոփոխության հետևանքով միջին հայերենի շրջանից սկսած հանդես են գալիս կրավորաձև վերջավորություններով՝ *հասայ, հասաւ, գտայ, գտաւ* և այլն²³: Իսկ սահմանափակ համաբանական փոփոխություն է տեղի

²¹ Տե՛ս է. Աղայան. Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 273–274, 608–611, Ս. Ավետյան. Համաբանության դերը հին հայերենի բուն և արգելական հրամայականների հետագա զարգացման մեջ.– «Բանբեր Երևանի համալսարանի», 2007, -3, էջ 66–74:

²² Տե՛ս Ջ. В а н Д р и е с. Язык. М., 1937, с. 151 – 154, 157 – 158.

²³ Տե՛ս Ս. Ավետյան. Հին հայերենի Ե խոնարհման ան ածանցավոր բայերի անցյալ կատարյալի ձևերի հետագա զարգացումը.–«Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն», 2013, 141.2, էջ 54–57:

ունեցել, օրինակ, իսպաներենի պատմական զարգացման ընթացքում. բայի խոնարհման հարացույցում տարբեր պատճառներով առաջացել են ձայնավորների հերթագայություններ, այդ թվում՝ *e/i* և *o/u*: Ընդ որում, *e/i* հերթագայությունը հիմնականում պահպանվել է ժամանակակից իսպաներենում, և միայն որոշ բայերի դեպքում է *i*-ն համաբանությամբ ընդհանրացել ողջ հարացույցում. հմմտ. մի կողմից՝ *ժ. իսպ. vestir* լիակցում, *visto* լիակցում եմ, *vestimos* լիակցում ենք, մյուս կողմից՝ *ժ. իսպ. vivir* (< *h. իսպ. vevir*) լիակցում, *vivo* լիակցում եմ, *vivimos* լիակցում ենք (փոխ.՝ *vevimos*): Ընդհակառակը, *o/u* հերթագայության դեպքում *u*-ն համաբանությամբ ընդհանրացել է բայերի մեծ մասի դեպքում. հմմտ. *ժ. իսպ. subir* լիակցում ենք, *subo* լիակցում եմ, *subimos* լիակցում ենք և այլն²⁴: Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում համաբանական փոփոխությունը ոչ միայն չի ընդհանրացել, այլև երկու նույնաբնույթ հերթագայությունների վրա (որոնք ծագմամբ ու գործառնությամբ միանգամայն զուգահեռ են եղել միմյանց) ազդել է տարբեր չափով. *o/u* հերթագայությունը գրեթե վերացել է, մինչդեռ *e/i*-ն հիմնականում պահպանվել է՝ բացառությամբ մի քանի բայերի:

Քերականական-համաբանական փոփոխությունների մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ, ի տարբերություն հնչյունական օրենքների, որոնց դեպքում հիմնականում հնարավոր է լինում բացահայտել բացառությունների ու շեղումների պատճառները, քերականական-համաբանական փոփոխությունների պարագայում դա ոչ միշտ է հաջողվում²⁵:

Արդ, քանի որ համաբանական-քերականական փոփոխությունները լեզուներում մի դեպքում կարող են ընդհանրանալ, իսկ մեկ այլ դեպքում՝ սահմանափակ դրսևորում ունենալ, այսինքն՝ համաբանական փոփոխությունների ընդգրկման ծավալը կանխատեսելի չէ, ուստի *h. հայ. հոգ. ուղղ. -ալք, -ելք, -իւք* ձևերի վրա եզ. ուղղ. -ալ, -ել, -իւ-ի ունեցած համաբանական ազդեցության փաստից չենք կարող հետևություն անել, որ հին հայերենում անպայման նույն բանը պետք է տեղի ունենար նաև հոգ. գործ. -իւք-ի դեպքում՝ եզ. գործ. -իւ-ի ազդեցությամբ: Մյուս կողմից, թեև ի հոլովման պատկանող խօսք, կուրծք, հմայք և այլ անեզական բառերի խօսիւք, կրծիւք, հմայիւք գործիականի ձևերը եզակի թվի համապատասխան ձևերի բացակայության պարագայում սկզբունքորեն կարող էին նպաստել հոգ. գործ. -իւք-ի՝ *-iukh* երկբարբառային արտասանության ընդհանրացմանը (հմմտ. փառաւք, կամաւք և այլ անեզական ձևերի դերը հոգ. գործ. -ալք-ի՝ *-aukh* երկբարբառային արտասանության ընդհանրացման հարցում), այդուհանդերձ հնարավոր չէ

²⁴ Տե՛ս М. В. Сергиевский. Введение в романское языкознание. М., 1952, с. 196.

²⁵ Տե՛ս Ս. Ավետյան. Տիպարական առանձնահատկությունների դերը լեզվի պատմական զարգացման ընդհանուր միտումների դրսևորման հարցում. - «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, -3, էջ 106-107:

հաստատապես ասել, թե հնչյունական զարգացման երկու հնարավորություններից տվյալ դեպքում որ մեկն է տիրապետող դարձել. ի հոլովման անեզական բառերի շնորհիվ ընդհանրացած *-iukh* երկբարբառային արտասանությունն էր, թե՛ եզգործ. *-իւ-ի* համաբանական ազդեցությամբ պայմանավորված *-iwkh* (> *-ivkh*) ձայնավոր + բաղաձայն կապակցությունը: Ինչպես արդեն ասացինք, *հ. հայ. -իւք-ի* հանգող հոգնակի գործիականի ձևը հայերեն բարբառներում հետք չի թողել, որը մեծապես կօգնեք խնդրի լուծմանը:

Այսպիսով, հին հայերենի աւ, իւ-ը բաղաձայնից առաջ երկբարբառներ են եղել՝ *au, iu*, իսկ ձայնավորից առաջ ն բառավերջում՝ ձայնավոր + բաղաձայն կապակցություններ՝ *aw* (> *av*), *iw* (> *iv*): Հայերենի նախագրային շրջանում (թերևս, հին հայերենում նույնպես) բառամիջում բաղաձայնից առաջ գործել է նախկին ձայնավոր + բաղաձայն կապակցություններից երկբարբառների առաջացման միտումը. *ըստ այդմ՝ հ. հայ. հոգ. գործ. -աւք (= auk^ε) ձևի աւ (au) երկբարբառն առաջացել է *aw- < *-abh- ձայնավոր + բաղաձայն կապակցությունից: Մակայն հոգնակի ուղղականում ք հոգնակերտին նախորդող աւ, իւ-ը, հակառակ ընդհանուր օրինաչափության (այն է՝ բաղաձայնից առաջ աւ = *au*, իւ = *iu*), երկբարբառային արտասանություն չեն ունեցել. տվյալ դեպքում աւ, իւ-ի պահպանվելը որպես *aw* (> *av*), *iw* (> *iv*) ձայնավոր + բաղաձայն կապակցություններ պայմանավորված է եղել եզակի ուղղականի բառավերջյան աւ, իւ ձայնավոր + բաղաձայն կապակցությունների համաբանական ազդեցությամբ:*

РОЛЬ АНАЛОГИИ В ФОНЕТИЧЕСКОЙ РЕАЛИЗАЦИИ ЗВУКОСОЧЕТАНИЙ *шл, һл*
 ПРЕДШЕСТВУЮЩИХ ПОКАЗАТЕЛЮ МНОЖЕСТВЕННОГО ЧИСЛА *ք* В
 ДРЕВНЕАРМЯНСКОМ

САРГИС АВЕТЯН

Резюме

Вопрос о фонетической реализации звукосочетаний *шл, һл* перед показателем множественного числа *ք* является спорным. Одни исследователи считают, что в данном случае *шл, һл* реализовались как *aw (> av)*, *iw (> iv)*. По мнению других, указанная точка зрения верна только по отношению к именительному падежу множественного числа, но в творительном падеже множественного числа *шл, һл* представляли дифтонги *au, iu* соответственно. Для того, чтобы обьяснить наличие *aw (> av)*, *iw (> iv)* перед окончанием *ք*, обычно предполагается, что между *ւ* (= *w > v*) и *ք* выступал гласный *ը* (напр. *hшлքք, hnվղիքք*). Наличие предполагаемого *ը* противоречило бы закономерностям слогообразования в древнеармянском, и кроме того, оно не подтверждается диахроническими данными армянского языка. Скорее, наличие звукосочетаний *шл (aw > av)*, *һл (iw > iv)* перед *ք* в именительном падеже множественного числа (напр. *hшлք [hawk^c > havk^c]*, *hnվղիք [howiwk^c > hovivk^c]*) обьясняется по аналогии с формой именительного падежа единственного числа, характеризованного конечными звукосочетаниями *шл (aw > av)*, *һл (iw > iv)* (напр. *hшл [haw > hav]*, *hnվղի [howiw > hoviv]*). Отражение звукосочетания *-шлք* формы творительного падежа множественного числа в некоторых современных диалектах в виде *-օք* очевидно показывает, что в данном случае содержался дифтонг *au* в древнеармянском. Но не ясно, ввиду отсутствия соответствующих диахронических данных, представляло ли *һл* в форме творительного падежа множественного числа дифтонг *iu* или, по аналогии с формой творительного падежа единственного числа, оканчивающейся на *-ղի (-iw > -iv)*, функционировало как звукосочетание *iw (> iv)*.

THE ROLE OF ANALOGY IN THE PHONETIC REALIZATION
OF THE SEQUENCES աւ, իւ PRECEDING THE PLURAL MARKER ք IN OLD ARMENIAN

SARGIS AVETYAN

S u m m a r y

The question of phonetic realization of աւ, իւ preceding the pl. marker ք is disputable. Some scholars consider that աւ, իւ were realized as *aw* (> *av*), *iw* (> *iv*) before the pl. marker ք. According to others, the mentioned view holds true with regard to the pl. Nom. only, whereas in the pl. Instr. աւ, իւ represented the diphthongs *au*, *iu*, respectively. The existence of the sequences *aw* (> *av*), *iw* (> *iv*) before the pl. marker ք is usually accounted for by presuming that the vowel ղ occurred between լ (= *w* > *v*) and ք (e. g. հաւքք, հնվիւքք). However, the alleged occurrence of the vowel ղ would contradict the patterns of syllable-formation in Old Armenian. Moreover, it is not borne out by diachronic evidence of Armenian. Rather, the occurrence of the sequences աւ (*aw* > *av*), իւ (*iw* > *iv*) before ք in the pl. Nom. (հաւք [hawk^c > havk^c], հնվիւք [howiwk^c > hovivk^c]) is due to analogical influence from the sing. Nom. characterized by the word-final sequences աւ (*aw* > *av*), իւ (*iw* > *iv*), respectively (հաւ [haw > hav], հնվիւ [howiw > hoviv]). As to the pl. Instr. forms in -աւք and -իւք, the latter, surely, contained the diphthong *au*, as evidenced by its reflex -օք in some modern dialects, but it is not clear, for want of respective diachronic data, whether իւ represented the diphthong *iu* in the pl. Instr., or it behaved as *iw* (> *iv*) on the analogy of the sing. Instr. in -իւ (*-iw* > *-iv*).